Հավը և ճուտիկները

Բրիաննա Քալ
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:

Հինգ փափկամազ դեղին ճուտիկները նայում էին Կլարային: *Ծիվ, ծիվ, ծիվ:*

Ամեն գարուն Կլարայի ընտանիքը ճուտիկներ էր գնում՝ խնամելու համար: Այսօր նա պետք է օգնի հայրիկին դրանց տանել տուն՝ ապրելու իրենց մյուս հավերի հետ:

Ճանապարհը, որով մեքենան անցնում էր, խորդուբորդ էր: Բայց Կլարան իր գրկում ամուր պահել էր տուփը, որտեղ ճուտիկներն էին: Նա մատի ծայրով նրբորեն շոյում էր դրանցից մեկին: Ճուտիկն այնքան փափուկ էր:

Երբ Կլարան և հայրիկը հասան տուն, քայլեցին դեպի հետնաբակում գտնվող հավանոցը: Հավանոցը մի փոքրիկ տնակ էր, որտեղ ապրում էին բոլոր հավերը և պատրաստում էին իրենց բները:

«Ո՞ր հավի հետ դնենք ճտերին»,- հարցրեց հայրիկը:

Կլարան նայեց շուրջը: Հավերից մեկը ծղոտ էր տեղափոխում և հավաքում թումբի մեջ: Ծղոտը նոր ճտերի համար հարմարավետ բույն կստեղծեր: Գուցե նա լավ մայր հավիկ կլիներ:

«Սա»,- ասաց Կլարան՝ ցույց տալով հավին:

Հայրիկը նրբորեն արկղից մի ձագ հանեց և դրեց հավի կողքին: Հավը նայեց ճուտիկին: Նա տարածեց իր թևը, և հանկարծ ճուտիկն անհետացավ:

«Ո՞ւր գնաց ճուտիկը: Արդյոք նա լա՞վ է»,- Հարցրեց Կլարան:

Հայրիկը գլխով արեց: «Նայիր»,-

ՆԿԱՐԸ՝ ԱՍՅԱ ՊԵՐԵՎՈՐԻ

«Հիսուս Քրիստոսն այս մասին խոսել է սուրբ գրություններում», - ասաց հայրիկը:

Ճուտիկը գլուխը հանեց հավի փետուրների տակից:

«Ինչո՞ւ հավը արեց դա»,- հարցրեց Կլարան:

«Ճուտիկին պաշտպանելու համար»,- ասաց հայրիկը: «Նա ապահով ու տաք կպահի նրան իր թևերի տակ»:

Կլարան օգնեց հայրիկին մյուս ճտերին դնել իրենց նոր մայր հավի մոտ: Հավը տարածեց թևերը, որպեսզի բոլորին իր մոտ հավաքի:

«Գիտես, Հիսուս Քրիստոսն այս մասին խոսել է սուրբ գրություններում»,- ասաց հայրիկը:

«Իսկապե՞ս,- ասաց Կլարան,- Նա ի՞նչ է ասել»:

«Ես քեզ ցույց կտամ»:

Կլարան և հայրիկը գնացին տուն: Հայրիկը բերեց իր սուրբ գրությունները: Ապա սկսեց կարդալ:

«Որքան հաճախ ես ձեզ կհավաքեմ, ինչպես հավն է իր թևերի տակ հավաքում իր ճտերին, եթե դուք սրտի ողջ նվիրվածությամբ ապաշխարեք և վերադառնաք ինձ մոտ»:*

Կլարան մտածեց հավի փետուրների տակ գտնվող յուրաքանչյուրի ճուտիկի մասին:

«Ուրեմն Հիսուսը մեզ հավաքում է այնպես, ինչպես հա՞վն է իր թևերի տակ հավաքում ճուտիկներին»,- հարցրեց Կլարան:

«Ճիշտ այդպես»,- ասաց հայրիկը: «Նա մեզ ապահով է պահում՝ այնպես, ինչպես հավն է պահում իր ճտերին: Բայց Նա մեզ պաշտպանում է ոչ միայն ցրտից, այլև շատ այլ վտանգներից: Նա գիտի, թե մենք երբ ենք վիրավորված, հիվանդ կամ տխուր: Նա մեզ խաղաղություն ու մխիթարություն է տալիս: Նա հոգում է մեր մասին»:

Հաջորդ առավոտ Կլարան կերակրեց հավին և նրա նոր ճտերին: Դա նրան ստիպեց մտածել հայրիկի կարդացած սուրբ գրության մասին: Նա ժպտում էր, մինչ մտածում էր Հիսուսի մասին: Նա գիտեր, որ Հիսուսը սիրում է իրեն և հոգ է տանում իր մասին, ինչպես հավն է հոգ տանում ճտերի մասին: ●

**3 Նեփի 10.6*

Կլարան ի՞նչ սովորեց Հիսուս Քրիստոսի մասին: